Ժամանակին Համաքայլ ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
NEW GENERATION

Սեպտեմբեր
Հոկտեմբեր
2020

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ #42

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻ ԴԵՄ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի բռնապետական ռեժիմը ծանր հրետանու, տանկերի և հրթիռների գործադրմամբ նախաձեռնեց լայնածավալ հարձակում Արցախի (Լեռնային Ղարաբաղի) շփման գծի ողջ երկայնքով:Ռմբակոծվում են Արցախի քաղաքներն ու գյուղերը, այդ թվում Ստեփանակերտը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմանը Վարդենիս քաղաքի ուղղությամբ:

Ադրբեջանը հստակ թիրախավորում է քաղաքացիական բնակչությանը՝ կոպտորեն խախտելով միջազգային մարդասիրական իրավունքը և բացարձակ անտեսելով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հրադադարի կոչը՝ պայմանավորված Կովիդ-19 համավարակով:Արցախում (Լեռնային Ղարաբաղում) զինծառայողների և քաղաքացիական անձանց շրջանում արդեն հարյուրից ավելի վիրավոր և տասնյակ զոհեր կա, այդ թվում առնվազն մեկ երեխա:Այս հարձակումն աննախադեպ է իր ծավալով և ռազմական տեխնիկայի ներգրավման տեսանկյունից: Կան հստակ ապացույցներ, որ գործողություններն իրականացվում են Թուրքիայի ռեժիմի բացահայտ աջակցությամբ:Մենք վստահ ենք, որ եթե միջազգային հանրությունը ժամանակին և պատշաճ կերպով չարձագանքի, ռազմական գործողությունները կարող են ընդլայնվել տարածաշրջանում հակամարտության գոտուց այն կողմ, ինչը կհանգեցնի հումանիտար ճգնաժամի, որն ավելի կսրվի կորոնավիրուսի համավարակի բռնկումների հետ կապված իրավիճակի պատճառով:Մենք հաստատակամ ենք աջակցելու բոլոր ջանքերին՝ ուղղված տարածաշրջանում մարդու իրավունքների, խաղաղության և անվտանգության պահպանման դեմ ուղղված բոլոր մարտահրավերների դիմագրավմանը:Հայաստանի քաղաքացիական հասարակությունը խստորեն դատապարտում է Ադրբեջանի ռեժիմի սանձազերծած ագրեսիան և դիմում է միջազգային հանրությանը, միջազգային կազմակերպություններին՝ ՄԱԿ-ին, Եվրախորհրդին, Եվրամիությանը, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին՝ շտապ և արդյունավետ միջոցներ ձեռնարկել Ադրբեջանի ռեժիմի ագրեսիան դադարեցնելու և հակամարտության խաղաղ լուծման համար ճանապարհ գտնելու ուղղությամբ բանակցությունները վերսկսելու համար:

ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ. ՄԻԵԴ-Ը ՎՃԻՌ Է ԿԱՅԱՑՐԵԼ...

2020թ.-ի սեպտեմբերի 24-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) կողմից կայացվել է վճիռ Ա.Ս.-ն ընդդեմ Հայաստանի և Ս. Պ.-ն ընդդեմ Հայաստանի գործերով: Հայաստանի Հանրապետության Կառավարությունը ընդունել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասով երաշխավորված դիմումատուների իրավունքների խախտումը: ՄԻԵԴ-ը վճռով պետությանը պարտավորեցրել է դիմողների վճարել 1.000 (մեկ հազար) եվրո 3 ամսվա ընթացքում:Գործում փաստաբանական և իրավաբանական աջակցություն տրամադրել է Նոր Սերունդ Մարդասիրական ՀԿ-ն: Գործի նախապատմություն:Տրանսգենդեր կանայք՝ Ս.Պ.-ն և Ա.Ս.-ի նկատմամբ 2017թ.-ի սեպտեմբերի 22-ին հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով. Խուլիգանությունը՝ դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով՝ որը կատարվել է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ: Կալանքի տակ գտնվելու

ժամանակահատվածում «Նուբարաշեն» ՔԿՀ-ում Ս.Պ.-ն բազմիցս ենթարկվել է դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և խոշտանգման, որի վերաբերյալ փաստաբանի կողմից ներկայացվել է հանցագործության մասին հաղորդում:Ս.Պ.-ն և Ա.Ս.-ն կալանքի տակ են գտնվել շուրջ երկու տարի:2019թ.-ի մայիսի 27-ին ՄԻԵԴ-ի կողմից կոմունիկացվել են «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի փաստաբան Արա Ղարագյոզյանի կողմից ներկայացված երկու դիմումները՝ Ա.Ս.-ն ընդդեմ Հայաստանի (դիմումը ներկայացվել է 20.02.2018թ.-ին) և Ս.Պ.-ն ընդդեմ Հայաստանի (դիմումը ներկայացվել է 26.02.2018թ.-ին):

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՀԵՏ

2020թ.-ի սեպտեմբերի 8-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի Լոռու մարզային գրասենյակում տեղի ունեցավ հանդիպում-քննարկում ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերի օգնական Լևոն Չիլինգարյանի և «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի մարզային շահառուների մասնակցությամբ:
Հանդիպում-քննարկման նպատակն էր ծրագրերի շահառուներին տեղեկատվություն տրամադրել ՄԻԱՎ-ի կանխարգելման և թեստավորման կարևորության մասին: Քննարկման ընթացքում ծրագրերի օգնական Լևոն Չիլինգարյանը ներկայացրեց ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիները, կանխարգելման ու բուժման եղանակները:Հատուկ անդրադարձ կատարվեց PrEP-ին (ՄԻԱՎ-ի նախակոնտակտային կանխարգելմանը) և PEP-ին (ՄԻԱՎ-ի հետկոնտակտային կանխարգելմանը): Թեմայի քննարկումն ուղեկցվեց ակտիվ հարցադրումներով և պարզաբանումներով:
PrEP-ի և **PEP**-ի մասին մանրամասն **ԱՅՍՏԵՂ:**

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն սեպտեմբերի 22-27-ը Երևանում էր հյուրընկալել 10 մասնակիցների Երևանից և մարզերից ժողովրդավարության վերաբերյալ փոխանակման երիտասարդական ծրագրի շրջանակներում: Ծրագիրը ունենալու է նաև շարունակականություն՝ երկրորդ փուլ, որից հետո մասնակիցները հնարավորություն են ունենալու դիմել փոքր դրամաշնորհների և ծրագրեր իրականացնել իրենց համայնքներում:
«Փոխանակման ծրագիրը կազմակերպվել էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի և Բավարիայի երիտասարդական խորհրդի (BJR) համագործակցությամբ, վերջինիս ֆինանսական աջակցությամբ և նպատակ ունի զարգացնելու մասնակիցների գիտելիքները և հմտությունները ժողովրդավարության վերաբերյալ, փոխանակելու փորձը գերմանացի մասնակիցների հետ և զարգացնելու միջմշակութային հաղորդակցությունը»,- նշում է ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը: Փոխանակման ծրագիրը պետք է իրականացվեր Գերմանիայի Մյունխեն քաղաքում, բայց պայմանավորված համաճարակային իրավիճակով՝ մասնակիցները միմյանց հետ կապ հաստատեցին առցանց եղանակով յուրաքանչյուրը իրենց երկրներից:

Փոխանակման ծրագրի հայաստանյան համակարգող Հմայակ Ավետիսյանը ասում է, որ տվյալ պարագայում կարևորվել է համագործակցությունը. «Մենք Երևանից ուղիղ կապի մեջ ենք եղել մեր գերմանացի գործընկերների հետ: Իհարկե շատ լավ կլիներ, որ մենք այս կազմով նույն օրերին լինեինք Մյունխենում, դեմ առ դեմ հանդիպեինք մեր ընկերներին, խոսեինք ժողովրդավարության լեզվով և փոխանակեինք մեր փորձը, բայց նոր հնարավորությունները դեռ առջևում են»:

Փոխանակման ծրագրի հայաստանյան համակարգող Հմայակ Ավետիսյանը ասում է, որ տվյալ պարագայում կարևորվել է համագործակցությունը. «Մենք Երևանից ուղիղ կապի մեջ ենք եղել մեր գերմանացի գործընկերների հետ: Իհարկե շատ լավ կլիներ, որ մենք այս կազմով նույն օրերին լինեինք Մյունխենում, դեմ առ դեմ հանդիպեինք մեր ընկերներին, խոսեինք ժողովրդավարության լեզվով և փոխանակեինք մեր փորձը, բայց նոր հնարավորությունները դեռ առջևում են»:

Դասընթացի առաջին օրը անցավ երկների առանձին խմբերով: Ծրագրի հայաստանյան համակարգողներ Հմայակ Ավետիսյանը և Աննա Զաքարյանը հայկական խմբի համար ծանոթացման վարժություններ արեցին և թիմի կառուցման փոքրիկ վարժանքներ: Երկրորդ օրը թիմերը անցկացրին միասին առցանց կապի մեջ լինելով: Ծրագրի բացման խոսքով հանդես եկան «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը և Բավարիայի երիտասարդական խորհուրդի նախագահ Մաթիաս Ֆաքը: Գործընկերները կարևորեցին միմյանց միջև եղած բարձր համագործակցությունը, հույս հայտնեցին, որ ավելի կամրապնդվի և կտա իր պտուղները: Բացման խոսքերից հետո երկու երկրների մասնակիցները ներկայացրեցին իրենց սպասելիքները և նպատակները: Օրվա երկրորդ կեսին էքսկուրսիաներ անցկացվեցին Երևանում և Մյունխենում: Հայաստանյան թիմը ներկայացրեցին հեղափոխական Երևանը, իսկ գերմանացիները նկարների միջոցով պատմեցին Մյունխենի ԼԳԲՏ պատմությունը:

Դասընթացի մյուս օրերին մասնակիցների հետ դասընթացներ, խմբային վարժանքներ և կիրառական աշխատարաններ անցկացրին գերմանացի երկու փորձագետներ Սաբին Զոմերի և Թոմ Մուրի հետ:

Փոխանակման ծրագիրը անցկացվեց առցանց հարթակների միջոցով, որտեղ մասնակիցները ինչպես միասնական, այնպես էլ փոքր խմբերով ունեցել են քննարկումներ տարբեր թեմաների շուրջ, կազմակերպվել են խմբային խաղեր և աշխատանքներ: «Մեծ սպասումներով մասնակցեցի ծրագրին, քանի որ, ինչպես գիտեք, համագործակցում էինք Գերմանիայի հետ, իսկ այնտեղ ժողովրդավարությունը մեծ տեղ է զբաղեցնում: Ծրագրից գոհ եմ, շատ գիտելիքներ ստացա: Շատ հետաքրքիր էին գործնական հատվածները, քանի որ դրանք թույլ էին տալիս գործնականում կիրառել ստացած գիտելիքները»,- պատմում է ծրագրի մասնակից Ինգա Ասատրյանը: Ծրագրի երկրորդ փուլը կայանալու է նոյեմբեր ամսին:



Նյութը պատրաստեց դասընթացի մասնակից, լրագրող Սվետլանա Դավթյանը:

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ 12 ԹԵՐԱՊԵՎՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

2020թ.-ի սեպտեմբերի 16-18-ը տեղի ունեցավ աշխատանքային հանդիպում ՀՀ Երևան քաղաքի և մարզերի 12 թերապևտների հետ ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի, Հեպատիտ C և B-ի, բուժհաստատություններում խարանի ու խտրականության կանխարգելման կարևորության վերաբերյալ: Հանդիպումը կազմակերպվել էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից GILEAD SCIENCES հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ, «ՀՀ ԱՆ Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի հետ համագործակցությամբ:

Հանդիպման առաջին օրը՝սեպտեմբերի 16-ին, «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ, Բժշկական օգնության և սպասարկման բաժնի բժիշկ-ինֆեկցիոնիստ Յուլյա Մանուկյանը խոսեց ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի, Հայաստանում կիրառվող բուժման մեթոդների մասին, գրանցված հաջողությունների մասին, նաև ներկայացրեց համաշխարհային փորձը և նորարարությունները ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելման ոլորտում: Հանդիպման երկրորդ մասի ընթացքում քննարկվեցին ՄԻԱՎ-ի նախակոնտակտային և հետկոնտակտային կանխարգելման միջոցները:

Հանդիպման երկրորդ օրը՝ սեպտեմբերի 17-ին, հանդիպմանփորձագետն էր «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի բժշկական գծով տնօրենի տեղակալ Նարինա Սարգսյանցը: Քննարկման թեմաներն էին Հեպատիտ C-ի և B-ի կանխարգելումը, խնամքի և բուժման մեթոդները: Հանդիպման երրորդ և չորրորդ օրերը նվիրված էին բուժհաստատություններում խարանի և խտրականության կանխարգելման, մասնագիտական էթիկա և բժշկական գաղտնիքի պահպանման, հասարակության խոցելի խմբերի հետ աշխատանքին:

ՆՍՀԿ իրավաբան Շուշան Խնկոյանը մասնակիցներին ներկայացրեց խարանի և խտրականության սահմանումը, խտրականության տեսակները և դրսևորումները:

Քննարկվեցին խտրականության բացառման կարևորությունը բժշկական օգնություն տրամադրելիս և խտրականության ազդեցությունը հանրային առողջության և բուժման արդյունավետության վրա:

«Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժ/պ Հովհաննես Մադոյանը մասնակիցներին ներկայացրեց բժշկական էթիկայի սահմանում, սկզբունքներ, նորմերի պահպանման կարևորությունը, պացիենտի իրավունքները և բուժաշխատողի պարտականությունները բժշկական օգնություն ցուցաբերելիս: Ներկայացվեց առողջության իրավունքը, առողջության իրավունքի բաղադրիչները, բժշկական ծառայությունների ընդունելի լինելու սկզբունքը:

Հանդիպումը անցավ անկաշկանդ հարց ու պատասխանի, բուռն քննարկումների մթնոլորտում: Հանդիպման ավարտին մասնակիցներին շնորհվեցին վկայականներ:

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ LIFE-14 ԱՐՏԱԳՆԱ ԴԱՍԸՆԹԱՑԸ

2020 թվականի սեպտեմբերի 3-5-ը տեղի ունեցավ «Խտրականության դեմ պայքար» ծրագրի շրջանակներում իրականացվող ԼԱՅՖ-14 արտագնա դասընթացը, որը այս անգամ նախատեսված էր ԿՍԿ սկսնակ ակտիվիստների համար: ԼԱՅՖ-14 արտագնա դասընթացի նպատակն է ԿՍԿ համայնքի ներկայացուցիչների շրջանում բարձրացնել ակտիվիզմի և մարդու իրավունքների վերաբերյալ գիտելիքների մակարդակը, նպաստել իրավագիտակցության բարձրացմանը, ծանոթացնել իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային մեխանիզմներին:
Արտագնա դասընթացին միացրել էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը, որը հանդես եկավ ողջույնի խոսքով: Նա իր ուրախությունը հայտնեց՝ մասնակիցների ակտիվությունը տեսնելով, ինչպես նաև ներկայացրեց կազմակերպության պատմությունը, գործունեության ոլորտները և առաջնահերթությունները:

Դասընթացի առաջին օրվա առաջին մասը նվիրված էր «Մարդու իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային մեխանիզմները, ՄԻԵԴ» թեմային, որը ներկայացրեց իրավաբան, դասընթացավար Սիրակ Եղիազարյանը՝ խոսելով մարդու իրավունքներ հասկացությունից, մարդու իրավունքները տարբեր ժամանակահատվածներում, մարդու իրավունքների սերունդները, պաշտպանության ներպետական և միջազգային համակարգերը: Դասընթացի ավարտին ներկայացվեցին մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, ՄԻԵԴ դիմելու ընթացակարգը:
Օրը շարունակվեց «Խարանի և խտրականության արգելք» թեմայով, որի շրջանակներում իրավաբան, դասընթացավար Լուսինե Գասպարյանը ներկայացրեց խտրականության սահմանումը, խտրականության տեսակներն ու հիմքերը, խտրական տերմինները և դրանց անխտրական տարբերակները: Դասընթացի երկրորդ օրը մասնակիցները ծանոթացան «Առաջնորդություն և ակտիվիզմ» թեմային:
Դասընթացավար-փորձագետ Հմայակ Ավետիսյանը մասնակիցներին ներկայացրեց առաջնորդություն հասկացությունը, առաջնորդության բնութագիրը, առաջնորդի հատկանիշները, ինչպես նաև տեսակները: Ներկայացվեց նաև ակտիվիզմի պատմությունը, տարբեր շարժումների նախադեպերը և ակտիվիստների կարևորությունը խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության ոլորտում: Փորձագետը խոսեց նաև Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովի աշխատանքներին և որոշումների կայացման գործընթացում համայնքների ներգրավվածության կարևորությանը:
Մասնակիցների հետ հանդիպելու համար դասընթացին մասնակցելու էր հրավիրվել Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության Գլոբալ ծրագրերի մոնիթորինգի և գնահատման մասնագետ Նաիրա Սերգեևան: Նա անդրադարձավ «ՄԻԱՎ-ին և ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին», խոսեց ՄԻԱՎ վարակի մասին, ինչպես նաև լսեց մասնակիցների բարձրաձայնած խնդիրները:

Դասընթացի երրորդ օրը շարունակվեց իրավական թեմաներով: Փորձագետներ Արա Ղարագյոզյանը և Արման Ղարիբյանը հաջորդաբար ներկայացրին «Խոշտանգում» և «Խոսքի ազատություն ընդդեմ ատելության խոսքի» թեմաները, որոնց շրջանակներում դասընթացավարները ներկայացրին խոսքի ազատության, ատելության խոսքի, խոշտանգումների սահմանումները, իրավական կարգավորումները:

ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԵԼ Է «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-Ի Ց ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԲՈՂՈՔԸ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն 2020թ.-ի օգոստոսի 19-ին դիմել էր ՀՀ գլխավոր դատախազություն՝ ճանաչել Ռ. Խ.-ի իրավունքների և ազատությունների խախտումը՝ հանձնարարելով հետաքննության մարմնին հանցագործության դեպքով նախապատրաստել նյութեր քրեական գործ հարուցելու համար:Արդյունքում ՀՀ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության կողմից 2020թ.-ի օգոսոսի 26-ի գրությամբ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթուն բաժնին հանձնարարվել է Ռ.Խ.-ի կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդման վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 180-181-րդ հոդվածներով սահմանված կարգով նախապատրաստել նյութեր և լուծել ընթացքը:

Գործի նախապատմությունը:

2020թ.-ի մարտի 16-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ է դիմել քաղաքացի Ռ. Խ.-ն, ում «ԻԶՄԻՐԼՅԱՆ» բժշկական կենտրոնում հրաժարվել են վիրահատել՝ տեղեկանալով նրա ՄԻԱՎ դրական կարգավիճակի մասին:ՀԿ-ն այդ մասին գրավոր բողոք է ներկայացրել ՀՀ առողջապահության նախարարություն, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին և հանցագործության մասին հաղորդում ներկայացրել ՀՀ ոստիկանություն:2020թ.-ի ապրիլի 20-ին Ռ. Խ.-ն ՆՍՀԿ-ի կողմից տրամադրված փաստաբանի հետ ներկայացել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթունի բաժին և տվել բացատրություն:ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթուն բաժնի 2020թ.-ի օգոստոսի 8-ի գրությամբ հայտնում են, որ ՆՍՀԿ-ի կողմից ներկայացված հաղորդման հիման վրա Քանաքեռ-Զեյթուն բաժնում իրականացված ստուգումներով Ռ.Խ.-ին դիտավորությամբ բուժօգնություն չցուցաբերելու վերաբերյալ փաստական տվյալներ չեն ստացվել, ուստի գրությունը թողնվել է անհետևանք և եզրակացությամբ կցվել է քարտուղարության շարքին: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով նյութեր չեն նախապատրաստվել, քանի որ 17.03.2020թ.-ի գրությամբ նշված հանգամանքները քննարկվել են որպես ստուգման կարիք ունեցող տեղեկություններ:



ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԵՌԱԿՈՂՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

2020 թվականի սեպտեմբերի 16-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ (ՆՍՀԿ) գրասենյակում տեղի ունեցավ եռակողմ աշխատանքային հանդիպում ՆՍՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանի, «Հանուն հզոր ապագայի» ՀԿ նախագահ Մաքսիմ Տրուբկինի և «Քալրֆուլ հաուս» ՀԿ նախագահ Գարիկ Ամոլիկյանի մասնակցությամբ: ՆՍՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը շնորհակալություն հայտնեց կողմերին հանդիպման մասնակցության համար՝ կարևորելով կազմակերպությունների համագործակցությունը և տրանս* անձանց հիմնախնդիրներով զբաղվող երկու կազմակերպությունների ներդրած ջանքերը ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերում: Կողմերը պատրաստակամություն հայտնեցին շարունակելու,

խորացնելու ու ամրապնդելու միմյանց միջև հաստատված համագործակցությունը: Երկու կազմակերպությունները վերահաստատեցին միմյանց հետ աշխատելու և Հայաստանի տրանս* համայնքին անհրաժեշտ ծառայություններ տրամադրելու ցանկությունը: ՆՍՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը կարևորեց այս շրջանում Միջոցառումները համակարգող հանձաժողովում տրանս* համանքի ներգրավվածությունն ապահովելու համար միահամուռ ջանքերով պայքարելը: Հանդիպումը անցավ ակտիվ հարց ու պատասխանի և քննարկումների մթնոլորտում:

ՏՐԱՆՍ* ԱՆՁԱՆՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

2020 թվականի հոկտեմբերի 5-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ գրասենյակում տեղի ունեցավ Տրանս* անձանց ազգային աշխատանքային խմբի (ՏԱԱԽ) հիմնական անդամների հանդիպումը՝ խմբի կանոնադրության մշակման վերաբերյալ: ՏԱԱԽ-ի հիմնական անդամները ներկայացնում են Հայաստանում տրանս* անձանց հիմնախնդիրներով զբաղվող հետևյալ կազմակերպությունները՝ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ, «Հանուն հզոր ապագայի» երիտասարդական ՀԿ, «Քալրֆուլ հաուս» սոցիալ-մշակութային և իրավապաշտպան ՀԿ, «Ֆիռլես» իրավապաշտպան ՀԿ, «Հավասարություն բոլորի համար» իրավապաշտպան ՀԿ: Հանդիպման մեկնարկին «Տրանս* քարտեզը ԱԵԿԱ-ում» ծրագրի համակարգող և ՏԱԱԽ-ի անդամ Հմայակ Ավետիսյանը ներկայացրեց նման ձևաչափով աշխատելու կարևորությունը և արդյունավետությունը, ինչպես նաև առաջադրեց «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ ծրագրերի օգնական Վ. Մ.-ի թեկնածությունը որպես խմբի ֆասիլիտատոր: Մասնակիցները ներկայացրին իրենց և խմբին միանալու իրենց մոտիվացիան: Լսելով Վ. Մ.-ի մոտիվացիան, խմբի անդամները միաձայն հավանության արժանացրին նրա թեկնածությունը: Հանդիպման երկրորդ մասը վարեց խմբի կանոնադրության մշակման փորձագետ, իրավաբան-փաստաբան Հասմիկ Պետրոսյանը, որը ակտիվ հարց ու պատասխանի, քննարկումների միջոցով դուրս բերեց կանոնադրության վերաբերյալ կարևոր հատվածները և հարցերի պատասխանները: Բացի կանոնադրության վերաբերյալ հարցերից՝ խմբի անդամները նաև քննարկեցին խմբի աշխատանքները կազմակերպելու ձևաչափը,

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԻԱՎ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

2020 թվականի սեպտեմբերի 11-ին ՀՀ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ մեծ դահլիճում տեղի ունեցավ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերի աշխատակազմի հանդիպում-քննարկումը:Հանդիպմանը մասնակցում էին կազմակերպության նախագահ Սերգեյ Գաբրիելյանը, ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերի համակարգող Արտյոմ Մովսեսյանը, ծրագրերի օգնականները, իրավաբանը, մոնիթորինգի և գնահատման մասնագետը և աութրիչ աշխատողները: Ծրագրերի ադմինիստրատիվ աշխատակազմի աշխատողները աութրիչ աշխատողների հետ քննարկեցին ծրագրերի ընթացքը և արդյունքները, նվաճումները, թերությունները, խոչընդոտները: Հստակեցվեցին աութրիչների շրջանում վերապատրաստումների թեմաների ցանկը, կազմակերպչական այլ հարցեր: Աշխատանքային հանդիպումը անցավ ակտիվ հարց ու պատասխանի և քննարկումների մթնոլորտում, բոլոր մասնակիցները գնահատեցին այս ձևաչափով հանդիպումների կարևորությունը:

առցանց հարթակները, որոնք պետք է օգտագործվեն շփումը մշտապես պահելու համար: Աշխատանքային խմբի համակարգող ընտրվեց «Ֆիոլես» իրավապաշտպան ՀԿ նախագահ, տրանս* ակտիվիստ Նորա Աղազարյանը: Հանդիպումը անցավ չափազանց ակտիվ և խանդավառ մթնոլորտում: Խմբի անդամները պատրաստակամություն հայտնեցին նույն ոգով շարունակելու աշխատանքները և նպաստելու Հայաստանում տրանս* անձանց հիմնախնդիրների լուծմանը, իրավունքների պաշտպանությանը և տեսանելիության բարձրացմանը:



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻՆ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն շարունակում է սնունդի, ժամանակավոր կացարանի և COVID-19 կանխարգելիչ նյութերի տրամադրման հայտերի հավաքագրումը այն ԼԳԲՏԻ (լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանս*), SUS (տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդ), ԿՍԿ (կոմերցիոն սեռական ծառայություն մատուցող կանանց) և ԹՕ (թմրամիջոցներ օգտագործող) անձանց համար, որոնք ենթարկվել են խարանի, խտրականության, բռնության և խոշտանգումների, COVID-19-ի համավարակի հետևանքներով պայմանավորված՝ մնացել են առանց կացարանի և ընտանիքի աջակցության, կորցրել են աշխատանքը և չունեն այլ ֆինանսական եկամուտ: Տվյալ շահառուների համար հասանելի են նաև իրավաբանական և հոգեբանական խորհրդատվության ծառայություններ:

Աջակցության համար անհրաժեշտ է դիմել հետևյալ հղումով :

ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ

2020թ. սեպտեմբերի 27-ից սկսվել են լայնամասշտաբ ռազմական գործողություններ Արցախի և Ադրբեջանի սահմանային ողջ երկայնքով, որի պատճառով տուժել է քաղաքացիական բնակչությունը, վնասվել բնակելի և քաղաքացիական շինություններ: Արցախի բնակչության զգալի մասը, ապահով միջավայր գտնելու նպատակով, լքել է և լքում է սեփական բնակավայրերը:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն սեպտեմբերի 27-ից ի վեր օգնում է ռազմական իրադրության պատճառով Արցախից Երևան տեղափոխվածներին՝ տրամադրելով նրանց սնունդ, կացարան և առաջին անհրաժեշտության կենցաղային պարագաներ, ինչպես նաև COVID-19-ի կանխարգելման միջոցներ: Մեր կազմակերպությունը ապաստան և առաջին անհրաժեշտության պարագաներ է տրամադրել Արցախից տեղափոխված 32 անձի՝ ՀԿ-ի տրամադրության տակ գտնվող կացարանում: Ժամանակավոր կացարանում մինչև հիմա էլ բնակվում են 15 տեղափոխված արցախցիներ: «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն շարունակում է և շարունակելու է մնալ կարիքավորների կողքին՝ տրամադրելով օգնություն ՀԿ-ի հնարավորությունների չափով:

ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ԿՅԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ. ՄԱՍ1

«Հիշում եմ՝ 14 տարեկան էի, երբ ամռանը մի տղայի հանդիպեցի պատահական: Ծանոթացանք, կոնտակտներով փոխանակվեցինք ու շփվեցինք մոտ 2 ամիս: Հետո ինքը գնաց Ռուսաստան, ու ... ինձ մոտ դեպրեսիա սկսվեց: Սիրահարվել էի այդ տղային: 14-ից 15 տարեկանի անցման շրջանում եմ ես հստակ հասկացել, որ ինձ տղաներն են հետաքրքրում»,- պատմում է Ադամը (անունը փոխված է) և տխրությամբ վերհիշում իր դպրոցական 9-րդ տարվա սեպտեմբերը: «Բառերով հնարավոր չէ նկարագրել՝ ինչ ես զգում, երբ սեռական հասունացման ընթացքում հասկանում ես, որ քո սեռական կողմնորոշումը տարբերվում է: 9-րդ դասարանի տարեսկիզբն էր: Հիշում եմ՝ սեպտեմբերին գնացի դասի ու հասկացա, որ օտար եմ այդ միջավայրում: Զգում էի, որ տարբերվում եմ, բայց չեմ կարող բացատրել՝ ինչ զգացողություն է, երբ դու քեզ օտար ես զգում, առանձնացված»,- ժպտալով անկեղծանում է: Մեծամասնությանը չնմանվող Ադամը ցանկանում է իր ինքնությամբ ապրել, սակայն տարբերվող վարքի ու արտաքինի պատճառով ընկերները օտարանում են, իրեն հեռացնում սոցիալական ցանցերից, դպրոցի տղաները սկսում են ծաղրել, ուսուցիչները դառնում են անտարբեր, իսկ ինքը՝ ինքնամփոփ ու չշփվող: «Հագնվելուս ոճն էր տարբեր, դպրոցի հետևում գնացող «թեմաների» մեջ չկայի: Ընդհակառակը, դեմ էի «թեմա անելուն», կռվելուն:

Բառապաշարիս մեջ էլ ռուսերեն մեջբերումներ չկային՝ «նիրյադ ըլնել», «կուռաժիտ ըլնել»: Էդ պատճառով տղաները ինձ հետ չէին շփվում: Ոնց ասեմ, էդ ամեն ինչը էնպես է անում, որ դու «իզգոյ» ես դառնում: Հետո դպրոցում տղերքից միակ լավ սովորողը ես էի: Միշտ օլիմպիադաների էի մասնակցում: Հիշում եմ՝ իմ հետևից «դոդիկ» էին կանչում, ասում էին՝ էդ «ղզիկը» ոնց կարա գնա օլիմպիադայի»: Կամ էլ ասում էին՝ էս փուլը անցնի, հաջորդը հաստատ չի անցնի, քանի որ «դրան» տեղ չեն տա»,-պատճառների մասին այսքանն է ցանկանում հիշել Ադամը:

Իմ հարցին, թե արդյո՞ք ուսուցիչները չէին միջամտում, փոքր-ինչ լռելուց հետո պատասխանում է. «Այլասերված բառը առաջին անգամ «Եկեղեցու պատմության» ուսուցչից եմ լսել: Ահավոր քրիստոնյա էր, ազգապահպան: Ասում էր՝ բոլորը պետք է առաքելական եկեղեցու հետևորդ լինեն: Ով չի հավատում, «աղանդավոր» է, «այլասերված»: «Այլասերված» ասելով հենց ԼԳԲՏԻ անձանց նկատի ուներ: Իսկ մեր ֆիզկուլտի դասատուն մի անգամ ՄԻԱՎ-ի մասին խոսելիս ասաց, որ դա «գոմիկների» միջոցով տարածվող հիվանդություն է, դրա համար պետք է «դրանց» հետ չշփվել»:Ադամը 15 տարեկանում թողնում է դպրոցը, տեղափոխվում է քոլեջում սովորելու, որտեղ իր սեռական կողմնորոշումը բացահայտվում է, երբ մի անգամ մոռանում է ԼԳԲՏԻ նշանով վզնոցը շորի տակ թաքցնել: Այդ «դեպքից» հետո կուրսի տղաների շրջանում սովորություն է ձևավորվում. նույնասեռական տղային վիրավորանքներով դիմավորում ու տուն են ճանապարհում, իսկ դասերի ժամանակ՝ ծաղրում: Վիրավորանքներին ու հայհոյանքներին ավելանում են հետապնդումներն ու ֆիզիկական բռնությունները, որոնք տարեցտարի շատանում են: «Ամեն առավոտ քոլեջ մտնելիս ինձ ու ընտանիքիս ուղղված տարբեր ռեպլիկներ, ամենազզվելի բառերով վիրավորանքներ էի լսում: Ասում էին՝ «Արա՛, էլի էս «գոմիկն» էկավ: Հլը սրա հագածը, սրա շարժուձևն ու քայլելը ... սկի աղջկեքը սենց չեն քայլում»:

Դասերի ժամանակ տղաները նստում էին իմ հետևի նստարանին ու սկսում ինձ բզել, ծակել, թղթերի մեջ վիրավորական բառեր գրել ու շպրտել ինձ վրա, մեջքիս ինչ-որ բաներ նկարել: Իսկ տուն գնալիս հավաքվում էին ելքի դռան մոտ, հենց տեսնում էին՝ մոտիկանում եմ,

մեկը ոտքը դնում էր շեմքի վրա, որ ընկնեմ... Մի անգամ ընկել եմ: Ծեծի դեպքեր էլ են եղել ... մի քանի անգամ ... քոլեջի հետևում: Դե մազերս, շորերս քոլեջի ասողների համար թեմա էին: Ասում էին՝ ոնց կարա տղան երկար մազեր ունենա»,-պատմում է Ադամը և ավելացնում, որ հատկապես ֆիզիկական բռնության դեպքերից հետո իրեն անապահով էր զգում: Այդ պատճառով երկրորդ կուրսի երկրորդ կիսամյակից սկսած դասի չի գնացել, քոլեջն էլ դժվարությամբ է ավարտել: «Հիշում եմ՝ դպրոցում երազում էի, թե երբ եմ ավարտելու դպրոցը: Նույնն էլ քոլեջում էր: Երազում էի, թե երբ եմ վերջապես ավարտելու, որ էլ չտեսնեմ էդ մարդկանց»,-այսպես է Ադամն ամփոփում մեր զրույցը: Կարենը (անունը փոխված է) փոքր հասակից է զգացել, որ տղաներին է համակրում, բայց «նույնասեռական» տերմինը բացահայտել է 13 տարեկանում: «Համացանցով մի բլոգերի էի հետևում, ով Գերմանիայում էր ապրում և հաճախ էր խոսում իր սեռական կողմնորոշման մասին: Ես գիտեի, որ տղաներին եմ հավանում, պարզապես չգիտեի, թե ինչպես են իմ տեսակին անվանում: Էդպես ուղղակի իմացել եմ, որ ես նույնասեռական եմ»,- պատմում է Կարենը և ավելացնում, որ ինքը միշտ հաշտ է եղել իր հետ, մարդիկ էին անհաշտ իր ինքնության նկատմամբ: Խնդիրներ հենց մանկուց է ունեցել: Պատճառն էլ պարզ է: Ծնվել, մեծացել և դպրոց է հաճախել գյուղում՝ փակ հասարակությունում, որտեղ բոլորը բոլորին ճանաչում են: «Ոչ միայն իմ դասարանը, այլև ամբողջ 300 հոգանոց դպրոցը ինձ ճանաչում էր որպես ինչ-որ մի յուրահատուկ տեսակի, որը գոյություն ուներ»,- դպրոցական տարիները այսպես է հիշում Կարենը և փորձում պատճառները թվարկել. «Դե դպրոցում միշտ տարբերվել եմ տղաներից թե ֆիզիկապես, թե իմ խոսելու ու հագնվելու ձևով, ինչը արդեն մեծ խնդիր էր»: «Ոչ ստանդարտ» տեսքի պատճառով Կարենը ոչ ուսուցիչների համակրանքին է արժանանում, ոչ էլ՝ դպրոցի տղաների. «Ֆիզկուլտի դասատուն էր միշտ նեղացնում, ինչ-որ անուններ էր կպցնում ինձ, վիրավորանքներ հնչեցնում: Ինձ անվանում էր «գոմիկ», «ղզիկ»: Տղաներն ինձ հետ չէին շփվում, ինձ նույնիսկ իրենց շրջապատ չէին ընդունում, շատ էին նեղացնում: Ինձ անվանում էին «գոմիկ» ու շատ վիրավորական բառեր, որոնք չեմ ուզում հիմա ասել»: Հիշում է՝ կռիվներ շատ են եղել, քանի որ իրեն վիրավորում էին, ինքն էլ փորձում էր պաշտպանվել: Տուն գնալու ճանապարհին կամ դպրոցի հետևում տեղի ունեցած ֆիզիկական բռնության դեպքերի և ուսուցիչների անտարբերության մասին էլ է հիշում. «Դասատուները եթե տեսնեին, մեզ իրարից կբաժանեին, բայց երբեք չէին պաշտպանի ինձ: Երբեք չէին ասում, որ ես ճիշտ եմ: Բայց մյուսներին էլ չէին մեղադրում: Չէին ասում՝ դուք սխալ եք»: Դպրոցական տարիներին այսպես է ձևավորվել է իր «միայնակ մարդու» կերպարը: «Ինչո՞ւ միայնակ» հարցի հիմնավորումն էլ պարզ է: «Եթե ինչ-որ խնդիր էր լինում, ոչ մեկը իմ կողքին չէր կանգնում, չէր աջակցում»,-պատասխանում է Կարենը: Վստահ է՝ ծնողները գիտեին իր սեռական կողմնորոշման մասին: Հարցնում էին, թե ինչ է կատարվում դպրոցում: Հասկանում էին, թե ինչն է պատճառը: Լինում էր՝ զանգում էին դպրոց, բայց «էդ դեպքերը» շարունակվել են դպրոցական ողջ ուսումնառության ընթացքում: Ծնողներին բազմիցս խնդրել է փոխել իր դպրոցը: Ասում է՝ մոտակա քաղաքի դպրոցում սովորելու ընտրություն ուներ: Կարծում է՝ այդկերպ գոնե կխուսափեր ֆիզիկական բռնությունից, քանի որ քաղաքը մեծ էր, մարդիկ՝ շատ ու իրար չէին ճանաչում: Բայց ծնողները իր խնդրանքին ընդառաջ չեն գնացել, ասել են՝ «Քաղաքում հարմար չի, էստեղ՝ գյուղում, մեր ծանոթներն են»: Իր դպրոցական առաջադիմության մասին պատմելիս նշում է, որ ընդունակ աշակերտ է եղել: Այժմ էլ գերազանց առաջադիմությամբ սովորում է բուհում: Բայց չի զարմանում, որ շատ ցածր գնահատականներով է դպրոցն ավարտել. «Պատճառը էն էր, որ ես անընդհատ, ամեն օր խտրականության էի բախվում: Անգամ եթե դասը լավ էի սովորում, ինձ բարձր չէին նշանակում դասատուները: Թեթև ատլետիկայի էի գնում և դասարանում ես էի ամենալավը վազում, բայց ֆիզկուլտի դասատուն ինձ միշտ ցածր էր նշանակում: Հետո՝ չեմ ունեցել ընկերների մեծ շրջանակ, ինձ հետ էրեխեքը փորձել են չշփվել»: «Էդ դասերը, որ ես քաղել եմ դպրոցում ֆիզիկական բռնությունների, վիրավորանքների տեսքով, միշտ ինձ հետ են մնալու, մինչև կյանքիս վերջ, արդեն

սպիացած են վերքի նման, չեն մոռացվելու, որովհետև արդեն իմ մասնիկն են դարձել»,-զրույցի ավարտին ասում է Կարենը և մի քանի վայրկյան լռելուց հետո ավելացնում. «Ես կարողացել եմ իմ ցավն ու իմ տարբերությունը էնպես օգտագործեմ, որ էդ փոսից դուրս գամ: Ոչ բոլորի մոտ է ստացվում: Ես կարողացել եմ դա անել անհատական ջանքերով: Դժվար էր, բայց ոչ անհնար...»:Ցավոք, Հայաստանում դպրոցները ԼԳԲՏ երեխաների համար ապահով տարածք չեն: Նմանատիպ պատմությունները փաստում են, որ երեխաները սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով խտրականության են ենթարկվում ինչպես դասընկերների, այնպես էլ ուսուցիչների կողմից, ինչը առաջ է բերում հոգեբանական բազում խնդիրներ, հանգեցնում է մեկուսացման և ցածր ինքնագնահատականի, խոչընդոտում է նրանց կրթության իրավունքի իրացմանը:

ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ԿՅԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ. ՄԱՍ 2

ԼԳԲՏԻ երեխաների նկատմամբ խտրականությունը՝ մարդու իրավունքների և սեռական կրթության թերի կազմակերպման հետևանք. Դպրոցներում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ դրսևորվող խտրական վերաբերմունքը, ատելությունը և բռնության դեպքերը ինչպես կրթական, այնպես էլ իրավական բացերի հետևանք են: Մարդու իրավունքների կրթության փորձագետ Գոհարիկ Տիգրանյանի դիտարկմամբ՝ դպրոցը տարիներ շարունակ քաղաքացի կրթելու իր պարտականությունը չի կատարել: Երեխաների մեջ քաղաքացիական և իրավական գիտակցություն արթնացնելու խնդիրը քաղաքացիական հասարակությունն է իրականացրել այն դեպքում, երբ դա պետության պարտականությունն է: Մարդու իրավունքների կրթությունը դպրոցական ծրագրերում ներառվել է դեռևս 90-ականներին: Նախ «Մարդու իրավունքներ» է կոչվել, հետո՝ «Պետություն և իրավունք», որին 2007 թվականին փոխարինել է «Հասարակագիտություն» առարկան: «Առարկան պետք է ամբողջությամբ միտված լիներ հանդուրժողականության և հավասարության ձևավորմանը, նպաստեր խտրականության վերացմանը, անհատի՝ որպես քաղաքացու ձևավորմանը և հասարակություն մտնելու բոլոր հմտությունների զարգացմանը: Սակայն առարկայի ուսուցումը գործնականում չի ծառայում իր նպատակային նշանակությանը»,- նշում է Գ. Տիգրանյանը և առանձնացնում պատճառները:«Առարկան պետք է ամբողջությամբ միտված լիներ հանդուրժողականության և հավասարության ձևավորմանը, նպաստեր խտրականության վերացմանը, անհատի՝ որպես քաղաքացու ձևավորմանը և հասարակություն մտնելու բոլոր հմտությունների զարգացմանը: Սակայն առարկայի ուսուցումը գործնականում չի ծառայում իր նպատակային նշանակությանը»,- նշում է Գ. Տիգրանյանը և առանձնացնում պատճառները:

Որպես այդպիսին՝ Հայաստանում «Հասարակագիտության» մանկավարժներ չկան: Դպրոցներում «Պատմություն», «Եկեղեցու պատմություն», «Քիմիա», «Ֆիզիկա» և այլ առարկաների ուսուցիչներն են դասավանդում այդ առարկան: Գործնականում լինում են դեպքեր, երբ նրանք «Հասարակագիտության» փոխարեն նախընտրում են իրենց առարկան պարապել, բայց մատյանի մեջ լրացնում են, որ «Հասարակագիտություն» են դասավանդել: Երևանի պետական մանկավարժական համալսարանում 2015-2016 թվականներից է սկսել «Հասարակագիտություն» բաժինը գործել՝ բակալավրի աստիճան ունեցող համապատասխան մանկավարժների պատրաստելու համար: Սակայն դպրոցներում առարկային հատկացված դասաժամերը քիչ են: Միջին դպրոցում 2 դասաժամ է հատկացված, ավագում՝ «Կես դրույքով ուսուցիչ աշխատելը ինչպե՞ս պետք է մոտիվացնի նորավարտ մասնագետներին՝ դպրոցներում «Հասարակագիտության» դասավանդելու համար»,-զարմանում է զրուցակիցս:

Գ. Տիգրանյանի դիտարկմամբ՝ խնդրահարույց է նաև այն, որ առարկայի շրջանակներում մարդու իրավունքների կրթության շարունակականությունը չի ապահովվում: Երեխաները 9-րդ դասարանում անցնում են «Իրավունք», 10-րդ դասարանում կապը կտրվում է, 11-րդ դասարանում անցնում են «Իրավագիտություն»: 9-րդ դասարանում թեմաներն փոքր-ինչ հանրամատչելի ձևով են ներկայացված, գործնական առաջադրանքներ են ներառված, սակայն 11-րդ դասարանում չոր իրավաբանություն է մատուցվում երեխաներին: Ընդ որում, դասագրքում բառաարաններ չկան, և տերմինները չեն բացատրվում: Մասնագիտական գրքերից վերցրած այդ բարդ տեքստերը նույնիսկ առարկան դասավանդող ուսուցիչների կողմից չեն ընկալվում, քանի որ նրանց վերապատրաստումները պատշաճ ձևով չեն կազմակերպվում: «Դասագիրքը այն առաջին օղակն է, որը կրթում է երեխաներին: Եթե ձևակերպումները բարդ են, բնականաբար դժվար է ընկալվում կամ չի ընկալվում այն գիտելիքը, որը պետք է փոխանցվի երեխաներին: Ավելին, մարդու իրավունքների հիմքում դրված արժեհամակարգը՝ արժանապատվություն, հավասարություն, հակախտրականություն, չի ներկայացվում, իսկ նյութի մատուցումը արհեստական է: Միգուցե երախաները տեսականորեն սովորում են, թե որոնք են համակեցության կանոնները, սակայն գործնականում չեն ընկալում, որ մարդու իրավունքները հենց այդ համակեցության կանոններն են՝ իրավական դաշտում տրված: Իրավունք-կարիք համադրությունը ևս չի ներայացվում կամ բացատրվում: Եվ որ ամենացավալին է, առարկայի կարևորությունը չի ընկալվում: Այն ներկայացվում է որպես երկրորդային, երրորդային նշանակության առարկա: Կարծում եմ՝ զարմանալի չէ, թե ինչու է անհատ կամ քաղաքացի ձևավորվելիս իրավական կրթություն մասը մնում բաց կամ թերի»,-մտահոգված է փորձագետը:

Կրթության կարևոր մասն են կազմում նաև սեռական կրթությունը և սեռական դաստիարակությունը: Սեռական կրթությունը ճշգրիտ տեղեկատվություն է հաղորդում սեռականության, սեռական առողջության և վերարտադրողականության մասին՝ համապատասխանեցված տարիքին և հարմարեցված մշակութային առանձնահատկություններին: Ճշգրիտ տեղեկատվությունից բացի այն նաև փոխանցում է մի շարք կարևոր արժեքներ՝ սեր, հոգատարություն, փոխհամաձայնություն, մարմնի անձեռնմխելիություն, կյանքի տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու հմտություններ: Բազմաթիվ երկրներ որդեգրել են սեռակրթության համապարփակ մոտեցումը, որը ոչ միայն տեղեկատվությունը, այլև այդ արժեքներն է փոխանցում, ինչը շատ կարևոր է անձի զարգացման և առողջ փոխհարաբերություններ ստեղծելու տեսանկյունից: Այդ մոտեցմամբ դասավանդումը սովորեցնում է, թե ինչ կարևոր արժեքներ կան, և կյանքի տարբեր իրավիճակներում անձը ինչպես կարող ես ճիշտ կողմնորոշվել և ճիշտ ընտրություն կատարել:

«Առողջապահության համաշխարհային կազմակերպության չափանիշները հստակ կերպով նշում են, թե երեխաները որ տարիքում ինչ ինֆորմացիա պետք է իմանան: Օրինակ՝ 11-12 տարեկանում պիտի արդեն իմանան, թե ինչ է սեռական կողմնորոշումը, ինչ է գենդերային ինքնությունը, որոնք ներկայացված չեն որպես հիվանդություն: Ապացուցված փաստ է. այն երկրներում, որտեղ կա սեռական կրթությունը, այդ երկրներում ավելի քիչ են անցանկալի հղիությունները, ավելի քիչ թիվ են կազմում սեռավարակները և սեռական բռնության դեպքերը»,-նշում է հոգեբան, սեռական և վերարտադրողական առողջության փորձագետ Անուշ Պողոսյանը: Ա. Պողոսյանի դիտարկմամբ՝ մտահոգիչ է այն փաստը, որ Հայաստանում երբևիցե երեխաների սեռական կրթությունը չի կազմակերպվել:

2008 թվականից սկսած պիլոտային ձևով գործարկվել են «Առողջ ապրելակերպ» դասաժամերը, որոնք ներառվել են «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի մեջ: Այսինքն՝ ան առանձին առարկա չէր, պարզապես դասաժամեր էին, որոնք 8-11-րդ դասարաններում կցվեցին «Ֆիզկուլտուրա» առարկային:

Հունվար և փետրվար ամիսներին եղանակի ցուրտ լինելու պատճառով երեխաները չէին կարող մարմնամարզությամբ զբաղվել: Այդ պատճառով նպատակահարմար համարեցին «Ֆիզիկական կուլտուրայի» այդ դասաժամերը փոխարինել «Առողջ ապրելակերպի» թեմաներով, որոնք ընդհանուր 14 դասաժամ էին կազմում: Վերարտադրողական առողջությանը հատկացվեց 7 դասաժամ: Մնացած 7 դասաժամերի ընթացքում հիմնականում խոսվում էր ծխախոտի, ալկոհոլի, թմրանյութերի վնասակար ազդեցությունների մասին: «Մենք նման իրավիճակում ընդհանրապես չենք կարող խոսել սեռական կրթության, առավել ևս՝ համապարփակ սեռակրթության մասին: Նախ՝ այդ թեմաները դասավանդում են «Ֆիզկուլտուրայի» ուսուցիչները, ովքեր թեմայի մասնագետ չեն, վերապատրաստումներն էլ ուշ-ուշ են իրականացվում: Սա արդեն իսկ լուրջ խնդիր է: Գործնականում արձանագրվում են դեպքեր, երբ «Ֆիզկուլտուրայի» ուսուցիչը պատրաստ չի լինում խոսել սեռական կրթությանը վերաբերող թեմաներից, աշակերտներն էլ իրենց հերթին են կաշկանդվում: Հետևանքը լինում է այն, որ վերարտադրողական առողջությանը վերաբերող թեմաները «թռնում են»: Այսինքն՝ այդ գիտելիքը՝ որպես դպրոցական կրթության մաս, չի կարևորվում, անգամ առանձին չի գնահատվում: Հետո՝ սեռական կրթությանը և վերտադրողականությանը վերաբերող թեմաները կիսատ են և ոչ ամբողջական այն դեպքում, երբ, օրինակ, շատ մանրամասնությամբ խոսվում է սեռավարակների մասին: Ինչքանո՞վ է արդարացված երեխաներին այդ տարիքում այդ խորությամբ բացատրել սիֆիլիսի, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին»,-նկատում է Ա. Պողոսյանը:

«Առողջ ապրելակերպի» ձեռնարկները վերջին անգամ փոփոխվել են մոտ 2 տարի առաջ: Թեև փոփոխությունները հիմնված չէին համապարփակ սեռակրթության վրա, բայց փորձագետի կարծիքով դրական միտում արձանագրեցին, օրինակ՝ ներառեցին թեմաներ սեռահասունացման և հակաբեղմնավորման մեթոդների մասին, սակայն դասավանդողները դարձյալ «Ֆիզիկական կուլտուրա» ուսուցիչներն էին: «Մենք երեխաների սեռական կրթության և դաստիարակության հարցում կարող ենք հաջողության հասնել միայն այն դեպքում, եթե այն առանձին առարկայի ձևով ներմուծվի դպրոցական ծրագրերի մեջ և դասավանդվի վերապատրաստված մասնագետի կողմից»,- ամփոփում է Անուշ Պողոսյանը:

Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության ենթարկվող անձինք չունեն իրավական պաշտպանության միջոց.

Դպրոցներում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ դրսևորվող խտրական վերաբերմունքը, ատելությունը և բռնության դեպքերը խոչընդոտում են ԼԳԲՏԻ երեխաների կրթության իրավունքի իրացմանը, սակայն ՀՀ ներպետական օրենսդրությունը անհրաժեշտ պաշտպանություն չի ապահովում՝ իրավական մեխանիզմների բացակայության պատճառով: «Մեր կազմակերպությունը նման դեպք ունեցել է: Երեխան չի ցանկացել դպրոց հաճախել, քանի որ իր սեռական կողմնորոշումը բացահայտվել է, ինչի հետևանքով ենթարկվել է խտրականության: Սակայն այս և նմանատիպ որոշ դեպքերի կազմակերպությունը ընթացք չի տվել, քանի որ նրանք չեն ցանկացել: Վախեցել են կրկնակի խտրականության ենթարկվելուց: Լուծումը այն է եղել, որ երեխաները պարզապես դպրոցը փոխել են»,- մանրամասնում է «Նոր Սերունդ» Մարդասիրական հկ-ի իրավաբան Շուշան Խնկոյանը:

2018 թվականին ՀՀ արդարադատության նախարարությունը մշակել է «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը դեռևս շրջանառության մեջ է և չի ընդունվել: Իրավաբանի դիտարկմամբ՝ այն չի համապատասխանում հակախտրական օրենսդրության միջազգային չափանիշներին, քանի որ նախագծում սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ներառված չեն խտրականության արգելքով պաշտպանված հիմքերի մեջ: Պնդմանը, թե ՀՀ Սահմանադրությունը և ներպետական օրենսդրությունը պարունակում են խտրականությունը արգելող դրույթներ, Շուշանը հակադարձում է. «Այդ դրույթները սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով իրավական պաշտպանության մեխանիզմներ չեն ապահովում:
Եթե, օրինակ, անձը բռնության է ենթարկվում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով, պաշտպանության որևէ միջոցի կարող է դիմել միայն բռնության ենթարկվելու փաստով»:

Այստեղ կարևոր է նշել այն հանգամանքը, որ մինչև տասնվեց տարեկան տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի մասնակցությամբ: Անչափահաս մասնակցի օրինական շահերը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում են նրա օրինական ներկայացուցիչները՝ ծնողները, որդեգրողները, խնամակալները կամ հոգաբարձուները:
Այս պայմաններում իրավական պաշտպանության առումով կրկին խնդիրներ են առաջանում, քանի որ շատ հաճախ անչափաասները չեն ցանկանում իրենց ծնողներին հայտնել իրենց սեռական կողմնորոշման մասին՝ հնարավոր ընտանեկան բռնությունից խուսափելու համար:

Նարե Հովհաննիսյան

ԼԳԲՏԻ ԱՆՁԻՆՔ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք. նշված է ՀՀ սահմանադրության 57-րդ հոդվածի 1-ին կետում, մինչդեռ ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչները փաստում են, որ Հայաստանում իրացված չէ իրենց այդ, ինչպես նաև շատ այլ իրավունքներ՝ պայմանավորված սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հետ: Տրասգենդեր Նորա Պետրոսյանը մասնագիտությամբ բուժքույր է, թեև փորձել է իր մասնագիտությամբ աշխատել, բայց չի հաջողվել. «Դիմել եմ ատամնաբուժարան, շտապօգնության բաժանմունք, բայց չեն ընդունել, պատճառաբանել են, թե տեղ չունեն, հարմար չէ»:
2017 թվականին կարողացել է աշխատանք գտնել միայն սպասարկման ոլորտում. սրճարանում մատուցող էր: Նորան պատմում է, որ սրճարանում աշխատելիս էլ բազմիցս ենթարկվել է խտրականության: Նրա խոսքով՝ գործատուն ի սկզբանե տեղյակ է եղել իր սեռական կողմնորոշման մասին, բայց խնդիրներ են առաջացել հաճախորդների հետ. «Սրճարանի այցելուները ասել էին, որ չեն ցանկանում, որ իրենց գեյ սպասարկի, ուտելիք տա, որովհետև դա հակահիգիենիկ է: Տնօրենն էլ ասաց, որ իմ պատճառով հաճախորդներ է կորցնում, որ այլևս չգնամ աշխատանքի»:
Նորա Պետրոսյանը այժմ զբաղվում է նաև սեքս աշխատանքով: Խոսելով աշխատանքային հարաբերություններում խտրականության մասին Իրավաբան Շուշան Խնկոյանը՝ նշում է, որ խնդիրը ՀՀ օրենսդրության մեջ խտրականության արգելքի

վերաբերյալ առանձին օրենք չունենալն է. «Թեև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3.1 հոդվածով արգելվում է խտրականությունը, սակայն առանձին չի նշվում ՍԿԳԻ հիմքով արգելքի մասին: Օրենքով միակ կետը, որով կարող ենք պաշտպանվել սոցիալական բնույթի կամ այլ հանգամանքներով խտրականության արգելքի հիմքն է»:
Նորան նշում է, որ տեղյակ է Աշխատանքային օրենսգրքի այդ կետի մասին. «Ոչ մի գործատու բացահայտ չի ասում, որ գործից հեռացնում է սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով, այլ պատճառներ են մեջբերում, դրա համար էլ չենք կարողանում դիմել օրենքին»:
Իրավաբանի խոսքով՝ գործատուն աշխատանքից ազատման հրամանի մեջ այլ հիմք է նշում, ինչը փոքրացնում է պաշտպանության մեխանիզմները: Գեյ Ալասկան (անունը փոխված է) էլ նշում է, որ քանի դեռ չէր բացահայտել իր սեռական կողմնորոշումը, աշխատանքի հետ կապված խնդիրներ չէր ունենում: Այդ ժամանակ աշխատում էր պահեստում որպես բանվոր: Հետո, երբ բացահայտել է իրեն, կարողացել է աշխատանք գտնել միայն սպասարկման ոլորտում:
Այժմ էլ աշխատում է սրճարանում որպես մատուցող: Մասնագիտությամբ մարքեթինգի մենեջեր է. «Մեկուկես տարի աշխատել եմ մեկ վայրում որպես մատուցող, առաջին մի քանի ամիսը խնդիրներ առաջացան: Տնօրենիս ընկերը տեսել էր ինձ փողոցում ընկերներիս հետ քայլելիս:
Հաջորդ օրը եկել էր սրճարան, մոտեցա, որ սպասարկեմ, ասաց՝ թող ուրիշը գա»: Այնուհետև Ալասկային գործատուն մեկ ամիս ժամանակ է տվել աշխատանքից հեռանալու համար, սակայն տեսնելով վերջինիս աշխատանքային հմտությունները՝ փոխել է մտադրությունը և չի ազատել աշխատանքից: Ալասկայի խոսքով՝ աշխատանքային գործընթացներում բազմիցս ենթարկվել է խտրականության, անգամ գործընկերների կողմից. «Մի օր գործընկերներիցս մեկն ասաց, որ ինձ են քննարկում: Աշխատանքի վայրում քննարկում էին իմ սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը, իսկ ես պատասխանեցի, որ թքած ունեմ, ես եկել եմ աշխատանքի, չեմ եկել, որ անձնական կյանքս քննարկեն»:
Ալասկայի խոսքով՝ գործատուները աշխատանքից ազատելիս չեն նշում սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը, պարզապես այլ պատճառներ են առաջ քաշում:

Իրավաբան Շուշան Խնկոյանի խոսքով՝ գործատուներն իրենց ապահովագրելու համար են այդպես ասում, քանի որ աշխատանքային հարաբերությունների իրացման ընթացքում արգելվում է, գործնական հատկանիշներից և մասնագիտական պատրաստվածությունից ու որակավորումից բացի խտրականության հիմք հանդիսացող որևէ այլ պայման սահմանելը, բացառությամբ եթե դա բխում է աշխատանքին ներհատուկ պահանջներից. «Պետք է հասկանալ, որ եթե մարդն իր գործը պատշաճ անում է, ի՞նչ տարբերություն՝ գեյ է, թե հետերոսեքսուալ»:
Ըստ իրավաբանի՝ ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչները հիմնականում չեն աշխատում պետական բարձր պաշտոններում. «Հայաստանում նույնասեռականությունը դեռևս հոգեկան հիվանդությունների շարքին է դասվում: Օրինակ՝ եթե զինծառայության պետք է գնան, նշում են այդ փաստը ու կառավարության որոշման համաձայն՝ ազատվում են զինվորական ծառայությունից: Հետո դա բնականաբար պատճառ է դառնում բարձր պաշտոններում աշխատանք չգտնելուն»:
Աշխատանքի իրավունքը մարդու անօտարելի իրավունքն է, իսկ աշխատանքային հարաբերություններում պետք է հաշվի առնել մարդու անձնային ու մասնագիտական պատրաստվածությունը:

Շուշանիկ Միսկարյան

ՍԵՌԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ասում են՝ բնությունը չի սխալվում, և յուրաքանչյուր ոք պետք է հարմարվի իրեն տրված ֆիզիկական կարգավիճակի հետ: Սակայն ոմանք ի ծնե ունեն,օրինակ, շնչառական խնդիրներ, որոնք բժշկությունն ի զորու է լուծել: Դա, իհարկե, խրախուսվում է հասարակության կողմից. չէ՞ որ շնչառությունը կենսական նշանակություն ունի անձի օրգանիզմի բնականոն աշխատանքի համար: Իսկ ի՞նչ կասեն նույն մարդիկ նույն բնության անսխալական լինելու վերաբերյալ, երբ պարզվի, որ այն սխալվել է, օրինակ, սեռը ձևավորելիս: Իհարկե, կլսենք, որ բնությանը դեմ գնալ չի կարելի: Իսկ եթե լավ մտածե՞նք...Փաստ է, որ մեզանից յուրաքանչյուրը դեռ վաղ տարիքից սոցիալիզացիայի կարիք ունի: Իսկ ինչպե՞ս է դա արտահայտվում: Երեխան ամեն հարցում ձգտում է ստանալ ծնողի բարեհաճությունը հատկապես ընդօրինակելով նրա վարքագիծը: Սակայն կան երեխաներ, որ դեռ մանկուց տարբերվում են: Ուշադիր ծնողը իհարկե նկատում, սակայն ոչ միշտ է ընդունում դա: Սովորաբար անձն ինքն է այդ մասին բարձրաձայնում ուշ դեռահասության կամ վաղ պատանեկության շրջանում: Խոսքը տրանս* անձանց մասին է: Անձինք, որոնք իրենց մարմնի հետ հաշտ չեն, որոնք ստիպված են ապրել այդպես երկար տարիներ, հաճախ նույնիսկ ամբողջ կյանքում: Ժամանակակից գիտությունը գտել է լուծում այս խնդրին ևս: Անձը կարող է սեռափոխության վիրահատություն կատարել: Սակայն ամեն ինչ այդքան էլ հեշտ չէ:

Ցավոք, սեռափոխության դիմելը Հայաստանում շատ մեծ խնդիր է: Ըստ համաշխարհային փորձի, եթե անձը բացահայտում է, որ իր գենդերը տարբերվում է իր կենսաբանական սեռից, պետք է նախ դիմի հոգեբանի, այնուհետև համապատասխան բժիշկների, որոնք կարող են կատարել սեռափոխության բարդ ու ռիսկային վիրահատությունը: Ամբողջ գործընթացը պետք է տևի տարիներ՝ անձի հոգեկան և ֆիզիկական առողջությանը չվնասելու համար: Սակայն Հայաստանում իրականությունն այլ է: Տրանս* անձը չի կարող դիմել իրեն անհանգստացնող հարցով, քանի որ այս դաշտի վերաբերյալ չկան օրենսդրական կարգավորումներ, հետևաբար չկան նաև համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ: Անգամ հասարակ քթի վիրահատության դեպքում պացիենտին պատրաստում են հոգեպես և զննում ֆիզիկապես, եթե կա մի փոքր վտանգ, որ հետագայում արդյունքը չի համապատասխանի սպասումներին, շատ բժիշկներ հետաձգում են վիրահատությունը: Այդ ամենը կատարվում է ընդամենը կոսմետիկ վիրահատության դեպքում: Իսկ սեռափոխությունը բավականին բարդ գործընթաց է, որից կախված է անձի հետագա լիարժեք կյանքը: Սա բավականին բարդ խնդիր է, սակայն ո՞րն է առաջարկվող լուծումը: Ցավոք,Հայաստանը այս խնդրի լուծման մասին չի էլ մտածում, քանի որ անտեսում է անգամ խնդրի գոյությունը: Եվ այստեղ տրանս անձինք օրինական կարգով չեն կարող վիրահատություն կատարել, որի պատճառը օրենսդրական կարգավորումներն են: Դա էլ հանգեցնում է նրան, որ վիրահատությունները կատարվեն գաղտնի կերպով կամ արտերկրում: Սակայն նրանցից ոչ բոլորը կարող են իրենց թույլ տալ վիրահատվել արտերկրում, քանի որ դա ֆինանսական մեծ ծախսեր է պահանջում:

Այսպիսով, ինչու՞ սեռափոխության խնդիրը Հայաստանում չի ստանում պատշաճ լուծումներ: Այս հարցի շուրջ զրուցել ենք տրանսգենդեր կին Մոնիկա Սարկիսյանի հետ, որն ավարտին է հասցրել սեռափոխության վիրահատությունների շարքը 2020թ. մարտ ամսին, Մարինե Ստեփանյանի հետ (անունն ու

ազգանունն իր ցանկությամբ փոխված են), որը տրանսգենդեր կին է. նա ցանկանում է կատարել սեռափոխություն, և իրավաբան — փաստաբան Անահիտ Մկրտչյանի հետ:

Ընդունված նորմայից տարբերությունները անձի մոտ ի հայտ են գալիս հիմնականում դեռ մանկուց: Վաղ տարիքում երեխան գաղափար անգամ չունի, թե ինչ է իր հետ կատարվում, երբ իր և հասակակից նույն սեռի ներկայացուցիչների հետաքրքրությունները չեն համընկնում: Իսկ ծնողները՝ որպես հասարակության կարծիքն իրենց մեջ կրող, «ամոթի զոհ» են դառնում և փորձում որքան հնարավոր է արագ ուղղել այդ «սխալը»: Այլ տարբերակ չտեսնելով՝ նրանք սկսում են ճնշում գործադրել մանկան փխրուն հոգեբանության վրա: Ե՛վ Մոնիկան, և՛ Մարինեն նշում են, որ դեռ մանկուց օտար են զգացել իրենց սեփական մարմնի մեջ, իսկ սեռափոխության մասին երկուսն էլ սկսել են մտածել 17-18 տարեկանում: Ու երբ խոսել են իրենց գենդերային ինքնության մասին տանը, երկուսին էլ արդյունքում դուրս են արել: Սա առաջին խնդիրն է, որին տրանսգենդեր անձը բախվում է արդեն միայնակ: Հետագայում խնդիրները միայն ավելանում են:

Մոնիկան սկսել է կանացի հորմոններ պարունակող հակաբեղմնավորիչներ ընդունել 18 տարեկանից: «Հայաստանում չկա էնդոկրինոլոգ, որը կզբաղվի հենց տրանս* անձանց խնդիրներով: Մենք հատուկ տրանս* անձանց համար նախատեսված հորմոններ չենք կարող ընդունել, որովհետև Հայաստանում դրանք ուղղակի գոյություն չունեն: Իսկ բժիշկը, փոխարինող դեղեր նշանակելով, ազատված է իրավական պատասխանատվությունից», -նշում է նա:

Փաստաբան Անահիտ Մկրտչյանը հաստատում է դա՝ ավելացնելով, որ բուժհաստատություններում ապացույց չկա, որ տրանս* անձինք նման դեղեր են ընդունում, հետևաբար նրանք զրկվում են հետագա պաշտպանությունից, չնայած հնարավոր է սահմանադրական կարգով հղում անել անձի այլ իրավունքներին: Այս մասին խոսելիս տրանսգենդեր կին Մարինեն շեշտեց. «Ես երբեք չեմ ընդունել այդ դեղերը, քանի որ գնահատում եմ առողջությունս: Դա ինձ համար ինքնասպանության պես մի բան է. ես ուզում եմ դառնալ կին, բայց առողջ կին»:

Դիցուք՝ «հորմոնալ թերապիան» անցնող անձը ցանկանում է նաև կատարել սեռափոխության վիրահատություն: Անահիտ Մկրտչյանը հաստատում է, որ Հայաստանում սեռափոխության վերաբերյալ արգելք կա և ավելացնում, որ ՀՀ ՔԿԱԳ-ում ասվում է, որ ծննդյան վկայականում կարելի է փոփոխություն կատարել սեռի վերաբերյալ. «Այսինքն՝ նման բան նախատեսում են, բայց նաև գործում է սահմանադրական արգելք»: Երկակի ստանդարտնե՞ր, թե՞ բացթողում, որի հիմքում ընկած է տրանս* անձանց անտեսանելի լինելը: Իսկ Մարինեն այս կոնտեքստում նաև ավելացնում է,որ պետությունն ընդունում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության տեսակետն ամեն ինչի վերաբերյալ, բացի տրանս անձանց առողջությանն առնչվող առաջարկություններին: Այս հարցով քայլեր են ձեռնարկում խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունները: Անահիտ Մկրտչյանը նշում է. ««Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն օրենքի նախագիծ է մշակել անձի գենդերային ինքնության ճանաչման մասին: Իսկ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի իրավաբան Շուշան Խնկոյանն ավելացնում է, որ օրենքի նախագիծն ուղարկվել է ՀՀ առողջապահության և Արդարադատության նախարարություններին՝ ծանոթացման և համապատասխան մասնագիտական եզրակացություն տրամադրելու համար: ՀՀ Առողջապահության նախարարությունից ստացել են պատասխան, համաձայն որի նախագիծը քննարկման ենթակա չէ: Իսկ Արդարադատության նախարարությունը տեղեկացրել է, որ օրենքի նախագիծը կքննարկեն նախարարության կողմից համապատասխան օրենսդրական փոփոխությունների համատեքստում:

Սաթի Ավագյան

Արդյունքում ունենք այն, ինչ ունենք: Իրավիճակը փոխելու համար ձեռնարկվում են քայլեր, որոնք անգամ ուշադրության չեն արժանանում: Սակայն արդյո՞ք կարող է մեզնից ինչ-որ մեկը վստահաբար ասել, որ մի օր իր կաշվի վրա չի զգալու այս խնդիրն ու իրենից բխող հետևանքները: Երբեք մի՛ ասա «երբեք»:

ԻՄ ԵՐԵԽԱՆ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ Է

Տիկին Սարան (անունն իր կամքով փոխված է) 57-ամյա կին է: Ապրում է քաղաքի արվարձաններից մեկում միակ երեխայի՝ 26-ամյա Էլլայի հետ: Մասնագիտությամբ խոհարար է, ներկա պահին՝ տարիքային խտրականության պատճառով գործազուրկ: Մենք գտնվում ենք իրենց վարձու գետնաշեն բնակարանում, որը թեև բազմահարկ շենքում չէ, բայց պայմանները հանրակացարան են հիշեցնում. բաղնիքն ընդհանուր է բակի մնացած բնակիչների հետ, տանը ջրամատակարարման համակարգ չկա: Նրանք նստած են իմ դիմաց՝ Էլլան՝ ամաչկոտ ու փոքր-ինչ լարված սպասվող հարցազրույցից, մայրը՝ աչքերն իմ հանդեպ բերկրանքով լցված: Վերջապես հանդիպել ենք մի քանի ամիս հեռահար շփումից հետո: Տիկին Սարան Էլլային այս ու այն կողմ է ուղարկում՝ լավագույն հյուրասիրությունները բերելու, հետո իր ձեռքով իր իսկ ֆիրմային պաղպաղակն է մրգերով պատրաստում:

Մենք զրուցում ենք անչափ ջերմ ու մտերմիկ միջավայրում ու վայելում տիկին Սարայի պատրաստած անուշեղենը: Էլլային ուղարկում է դրսի աղբյուրից ջուր բերելու:

«Անյա ջան, ես մայր եմ,- սկսվում է մեր խոսակցությունը,- գնա ու գազանի բնի մեջ փորձիր իր ձագին ձեռք տալ: Ի՞նչ կանի գազանը քեզ: Բա ինքն էլ իմ ձագն ա... Իսկ ես էդ ծնողն եմ, էդ գազանն եմ: Ի՛նչ.. Ո՛նց... Խի՛... Ես մայր եմ: Իմ երեխան ոնց կա, ես ընդունել եմ ու ապրում եմ իր հետ: Էնքան հարվածներ եմ ստացել՝ էսօր ես կռացել եմ: Ձինվորը, մեռնեմ իրանց ջանին, դիրքում ա կռվում, իսկ ես հասարակության մեջ եմ կռվում, հասկանու՞մ ես: Ես էլ իմ դիրքն եմ պահում: Էնքան դժվար ա եղել ինձ համար: Ավել-պակաս խոսել են, անգամ քարեր են շպրտել մեր տանիքի վրա, վերջին բառերն եմ լսել...» Էլլան տրանսգենդեր կին է: Ըստ վիճակագրության Հայաստանը արդեն որերորդ տարին է եվրոպական երկրների շարքում հոմոֆոբիայի մակարդակով գտնվում է առաջին եռյակի մեջ՝ երբեմն միայն զիջելով Թուրքիային ու Ադրբեջանին: Իսկ ինչքան հոմոֆոբ է լինում հասարակությունը, այդքան ավելի դժվար է ԼԳԲՏԻ անձանց համար անգամ իրենց սեփական ընտանիքների կողմից սիրո ու հոգատարության արժանանալը:

Այդ պատճառով Հայաստանում գենդերային և սեռական բազմազանությանը պատկանող անձինք հաճախ ընտանիքից ու հասարակությունից թաքցնում են իրենց սեռական կողմնորոշվածությունն ու գենդերային ինքնությունը: Շատ դեպքերում, երբ ծնողներն իմանում են երեխայի ինքնության մասին, հրաժարվում են նրանից ու առանց տանիքի թողնում: Հատկապես հիմա՝ COVID-19-ով պայմանավորված խառը ժամանակաշրջանում ԼԳԲՏԻ համայնքը այս համատեքստում

շատ ավելի խոցելի է դարձել: Բայց նույնիսկ այն բացառիկ դեպքերում, երբ ի վերջո ծնողն իր մեջ ուժ է գտնում երեխային ընդունելու ու սիրելու, հաճախ չի կարող դա անել բացեիբաց՝ հասարակության ու հարազատության առջև:

Սակայն այլ է Էլլայի ու տիկին Սարայի պատմությունը: 2014 թվականն էր, երբ Էլլան պարտադիր զինվորական ծառայությունն ավարտեց ու մորը վերջապես ասաց, որ իրեն աղջիկ է զգում: Կռված էին: Թղթի վրա գրություն թողեց, որ մայրը տեսնի ու կարդա ճշմարտությունը, ու տնից դուրս եկավ: Իսկ մայրը վաղուց էր զգացել. Դեռ փոքր ժամանակվանից սկսած Էլլան տիկնիկներով էր խաղում ու կանանց շորիկներ էր հագնում: «Անգամ հին լուսանկարներում իր կանգնած դիրքից ու ձևից զգացվում է կանացիությունը»,- փաստում է տիկին Սարան: Իրենց ընտանիքի մնացած անդամների մոտ միասին ապրելու ընթացքում Էլլայի մասին հարցեր իհարկե ծագում էին, օրինակ՝ իր երկար մազերի հետ կապված, սակայն ինքնության մասին Էլլան անձամբ է նրանց հայտնել: «Իրեն ընտանիքում ոչ ոք չի ընդունել, բայց ես բոլորին դեմ եմ գնացել: Ասում էի՝ մի ստիպեք ինձ հրաժարվել իմ երեխայից: Կարող ա հիմա բոլորի աչքին փուշ երևամ արածիս համար, բայց ես իմ երեխային եմ ընտրել»,- ասում է տիկին Սարան ու մատնացույց անում տան պայմանները, որտեղ ջրամատակարարում ու սանհանգույց չկա, հետո հավելում՝ ոչի՛նչ:

Էլլան պատմում է, որ տնից հանել են միայն իրեն, իսկ մայրը իր կողքին լինելու համար է դուրս եկել. «Ուղղակի տատին տենց որոշեց, որ իրա տունն ա, ու ես պիտի պարտադիր թողնեմ գնամ:

Բայց լավ տատիկ ա եղել ինքը, ուղղակի ինֆորմացիայի պակասից մարդիկ մտածում են թե մենք էսպիսին ԴԱՌՆՈՒՄ ԵՆՔ: Դրա համար էլ չեն ընդունում:» Իսկ տիկին Սարան պատմում է, որ հիմա, չնայած նրան, որ արդեն վեց տարի Էլլայի հետ տնից հեռու են ապրում, բայց ամեն անգամ մորն այցելելիս վերջինս իր օրվա եփած ճաշից Էլլայի համար էլ է ուղարկում: «Էսօր ամենակարևոր առանցքն ինձ համար մաման ա, ինքը եթե կողքս ա, ուրեմն մնացածից չեմ նեղվում»,- ասում է Էլլան: Ընդհանրապես, վերջին վեց տարիները դժվար են եղել վերոնշյալ պայմաններում ապրող, առանց աշխատանքի մնացած ու հասարակության կողմից հաճախ քարկոծվող Էլլայի ու տիկին Սարայի համար: Նրանք սպասում են այն օրվան, երբ Էլլայի սեռափոխության վիրահատություններն իրականացնելու հնարավորություն կունենան: Մինչ այդ, սակայն, գենդերային ինքնության հիմքով պայմանավորված խտրականության պատճառով Էլլան արդեն տարիներ շարունակ չի կարողանում ամենահասարակ աշխատանքը գտնել: Ոտքով Ռայկոմից մինչև Կենտրոն ու Երրորդ մաս քայլել ու սրճարաններում ռեզյումեներ է թողել, բենզալցակայաններ է դիմել, նույնիսկ Սանիտեկ: Ապարդյուն: Այդպես էլ չեն զանգել: Իսկ իմ հարցին, թե ստեղծված իրավիճակում հնարավորության դեպքում ինչ կփոխեր, տիկին Սարան պատասխանում է. «Կփոխեի մարդկանց մտածելակերպը, խտրականությունը կփոխեի, որ գոնե մի քիչ չանտեսեին: Էսօր ծնողներ կան, ովքեր իրենց երեխաներին հանում են դուրս, փողոցում են թողնում: Խղճում եմ էդ երեխաներին: Ես երբեք չեմ պատկերացնում մայր, ում երեխան էս կարգավիճակում է ու ինքը հրաժարվում է իր երեխայից: Ես քանի ապրում եմ էդպես չեմ անելու, ու ում դուրը չի գալիս, թող ինձ հետ գործ չունենա:

Բոլոր իրա նման էրեխեքի մասին ա խոսքը: Կուզեմ մի ծրագիր լինի, որի շրջանակում բոլոր նման կարգավիճակում գտնվող մայրերս հավաքվենք մի սեղանի շուրջ ու ուղղակի մեկս մյուսի դեմքին նայենք, հասկանանք՝ ով ինչ ա մտածում, ով ումից ինչ ա ուզում... Ավելի լավ չի՞ լինի, եթե մայրն իր երեխայի կողքը լինի, հասկանա իր

երեխային... Ես էլ ջղայնանում էի, բորբոքվում էի, չէի հասկանում, բայց ի վերջո գլուխս դնում էի բարձին ու մտածում էի, թե ինչքան կարամ էս երեխու «ներվերը սղոցել»: Փոխվելու՞ ա: Իհարկե՝ չէ: Չի փոխվելու: Ես եմ ծնել էս էրեխուն. սենց ա ծնվել: Անյա ջան, ես ոնց որ մարտի դաշտում զինվոր եմ եղել. անընդհատ պիտի նենց անեի, որ կրակոցները մեզ չկպնեն: Բայց միայն մեռնելուց կարող ա իրենից հրաժարվեմ: Միայն էն ժամանակ, երբ արդեն գոյություն չեմ ունենա: Իսկ մինչ այդ իր կողքին եմ լինելու:»

Անյա Հայրապետյան

ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՍԱԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ #42

Մարդու իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային մեխանիզմներ

Խոշտանգումներից զերծ մնալու իրավունք ոստիկանության համակարգում

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ

NEW GENERATION
HUMANITARIAN NGO

Ժամանակին Համաքայլ ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը:

Հայաստան, 0001, Երևան, Թումանյան 10 բն. 7
NewGenerationNGO@gmail.com
www.ngngo.net
+37460378989 +37460478989

New Generation Humanitarian NGO
@NGNGOArmenia
ngngo.armenia